

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան
Բանաս.գիյր. թեկնածու

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎՈՒՄ*

Բանալի բառեր – Պատահականություն, անհրաժեշտություն, իրադարձությունների հոսք, գիտակցություն, ենթագիտակցություն, անգիտակից ոլորտ, լեզու, լեզվական տարբերակ, լեզվական արտահայտչամիջոց:

Անկախ իր կամքից գոյություն ունեցող աշխարհը իրերի բազմություն է: Բազմության մեջ իրերի միջև որոշակի հարաբերություններ են գործում իրենց հերթին առաջ բերելով իրադարձություններ: Իրադարձությունը մեկից ավելի իրերի միջև առաջացող հարաբերությունն է կամ արդեն ձևավորված հարաբերության զարգացումը: Որոշ իրեր գոյություն ունեն իրարից անկախ, և կան նաև իրեր, որոնցից մեկի գոյությունը մյուսի գոյության պատճառ, նախապայման կամ հետևանք է:

Քանի որ մեկ իրի գոյությունը սովորաբար պայմանավորված է մյուսի գոյությամբ, և իրադարձություններից մեկը սովորաբար առաջացնում է մեկ այլ իրադարձություն, կամ ինքը հաջորդում է որոշակի իրադարձության, ապա կարելի է ասել, որ իրերը գոյություն ունեն որպես մեկ միասնական **ամբողջ**, իսկ իրադարձություններն ըստ էության իրար հաջորդող անընդհատ **հոսք** են առաջացնում: Միևնույն իրը կարող է միաժամանակ մեկից ավելի իրադարձությունների մաս լինել: Եվ եթե հաշվի առնենք, որ յուրաքանչյուր առանձին իր կարող է միաժամանակ մեկից ավելի իրադարձություններ ապրել, ապա կարող ենք եզրակացնել, որ մարդուն անկախ իր կամքից տրված իրականությունը առանձին իրերի ամբողջ է, որի միասեռությունն ապահովված է ներակա հարաբերությունների շնորհիվ:

Հարաբերությունների գոյությունը բխում է իրադարձություններից: Իրադարձություններն ու հարաբերությունները պարտադիր հաջորդականություն ունեն. հարաբերությունները միմյանց նկատմամբ անկախ են, սակայն իրենց գոյությամբ ուղղակի կախման մեջ են իրադարձություններից: Իրադարձությունները կարող են առաջ գալ երկու սկզբունքով՝ **անհրաժեշտության** և **պատահականության**: Անհրաժեշտաբար առաջացող իրադար-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 5.06.2014:

ծությունները կազմում են օրինաչափ, միապաղաղ հոսք, իսկ պատահական իրադարձությունները դիտվում են որպես շրջադարձեր՝ մեծ կամ փոքր: Իրադարձությունների անհրաժեշտ շղթան ոչ այլ ինչ է, եթե ոչ հենց **ժամանակը**: Մարդն ապրում է իրադարձությունների անհրաժեշտ ընթացքի մեջ, բայց սպասում պատահականությունների: Իրադարձությունների միապաղաղ հոսքը ընդամենը լճացումն է, տրամաբանական զարգացումը, որը միշտ կանխատեսելի է, սպասելի: **Պատահականությունն ապրելու խթանն է:**

Եթե փորձենք անհրաժեշտությունն ու պատահականությունը քննել երկու կողմից, ապա կստացվի, որ դրանք իրարից անջատ են միայն սուբյեկտիվ տեսանկյունից, իսկ իրականում ոչ միայն իրարից մեկուսացած ու տարբեր չեն, այլև նույնիսկ միևնույնն են ըստ էության: Բանն այն է, որ միևնույն իրը, չնայած կարող է մաս լինել միաժամանակ մի քանի իրադարձության, այնուամենայնիվ չի կարող բոլոր իրադարձությունների մասը լինել: Սա նշանակում է, որ իրի համար այն իրադարձությունները, որոնց մասն է ինքը, դիտվում են որպես անհրաժեշտ հոսք, իսկ այն իրադարձությունը, որ բեկում է այդ միապաղաղ հոսքը, իրի համար պատահականություն է: Այդ պատահականությունն ըստ էության ընդամենը մեկ այլ հոսքի խաչավորումն է կամ միացման կետը տվյալ հոսքի հետ: Սա նման է չհամաձայնեցված պատահականությանը, որի մասին խոսում էր դեռևս Արիստոտելը՝ օրինակ բերելով երկու ծանոթների պատահական հանդիպումը փողոցում. եթե մի ծանոթը տեղյակ լիներ մյուսի պլաններին, այդ հանդիպումը չէր լինի պատահական¹:

Իրադարձությունների խաչաձևումը կամ միացումը որոշակի որակ, կարևորություն ունենալու դեպքում է միայն ուշադրության արժանանում իրի կողմից. երբ մարդու ժամանակի մեջ տվյալ իրադարձությունը, որքան էլ այն անսպասելի լինի, չի փոխում որևէ էական բան, ապա մնում է անուշադրության մատնված՝ այդպիսով վերածվելով պարզապես ժամանակի մի մասի: Սակայն, եթե տվյալ անսպասելի իրադարձությունը մարդու ժամանակի մեջ առաջ է բերում ինչ-որ կտրուկ շարժ, ապա այն հատուկ ուշադրության է արժանանում՝ որակվելով որպես պատահականություն:


Պարզվում է, որ պատահականությունն ու անհրաժեշտությունը միայն հարաբերական տարբերություն ունեն: Ըստ էության պատահականությունը նույնպես անհրաժեշտություն է. եթե տվյալ պահին «անհրաժեշտությունն անպատեհ է, և ինչ-որ մեկը ինչ-որ պահի ստիպված է անսովոր գործել»², նշանակում է, որ հենց այդ անսովոր գործողությունն էր անհրաժեշտ տվյալ իրադարձության մեջ, այսինքն՝ պատահական գործողությունը դադարում է պատահական լինելուց և դառնում անհրաժեշտություն:

Տվյալ ժամանակն ապրող իրի տեսանկյունից պատահականություն է այն իրադարձությունը, որի ծագման պատճառը ինքը չի կարող գտնել կամ բացատրել, որովհետև այդ իրադարձության ծագումը ժամանակային մեկ այլ հոսքի մեջ է՝ այն հոսքի, որի մեջ ինքը չի եղել: Մինչդեռ ցանկացած իրադարձություն, ցանկացած հոսք կարգավորվում է պատճառահետևանք-

1 Տե՛ս **Чайковский Ю.** О природе случайности. М., 2004, էջ 173:

2 **Млодинов Л.** (Не)совершенная случайность. Как случай управляет нашей жизнью. М., 2010, с. 16.

քայնորեն, տրամաբանորեն: Ըստ էության ամեն ինչ ունի իր պատճառը: Եթե հնարավոր լինեին պատահականությունները՝ որպես օբյեկտիվ գոյություններ, ապա դժվար թե իրերի ամբողջությունը կատարյալ կարգուկանոնի ու հավասարակշռության մեջ լիներ: Կատարյալ հավասարակշռությունը, հաջորդականության ամրությունը հնարավոր է միայն մեկը մյուսից բխող հաջորդականության դեպքում: Պատկերացնենք բազմաթիվ օղակներ, որոնք հնարավոր է անցկացնել մեկը մյուսի միջով՝ այդպիսով ստանալով շղթա. այդ օղակներից ստանանք այդպիսի մի շղթա, ապա պարզապես դասավորենք ցիրուցան տեսքով: Պարզ է, որ առավել ամուր ու կարգավորված է շղթայակերպ դասավորությունը: Իրար մեջ անցկացրած օղակների շղթան կլինի իրադարձությունների հոսքի մոդելը՝ ժամանակային միապադաղ ընթացքը: Պատահականության տեղը կարելի է ցույց տալ՝ նույնպիսի մեկ այլ շղթա պատկերացնելով և այդ շղթայի օղակներից մեկը արդեն եղած շղթայի որևէ օղակին ամրացնելով:



Իրերի սուբյեկտիվ կեցությունները միասին մեկ համակարգ են կազմում, և, ուրեմն, պարզ է, որ պատահականությունը կարող է ունենալ մասնավոր, ընդհանուր և համընդհանուր ընկալումներ. մասնավոր ընկալումն այն է, երբ տվյալ իրադարձությունը որակվում է որպես պատահականություն միայն մեկ իրի համար, սակայն եթե տվյալ իրադարձությունը ընկալվում է որպես պատահականություն իրերի որոշակի բազմության համար, ապա պատահականությունը ընդհանուր է, իսկ եթե տվյալ իրադարձությունը գոյություն ունեցող իրերի ամբողջ համակարգի կողմից է ընկալվում որպես պատահականություն, ապա այն համընդհանուր ընկալման պատահականություն է:

Մասնավոր ընկալման պատահականությունների քանակը տվյալ իրի կեցության ընթացքում հակադարձ համեմատական է նրա գիտելիքի, ճանաչողության սահմաններին. որքան լայն են ճանաչողության, գիտելիքի սահմանները, այնքան փոքր է պատահականությունների քանակը տվյալ իրի համար: Որքան շատ է մարդը ճանաչում, այնքան հեշտ է բացատրում իրականությունը, և որպես պատահականություն որակվող իրադարձու-

թյունների քանակը նվազում է:

Քանի որ իրերի գիտելիքի և ճանաչողության սահմանները տարբեր են, ապա միևնույն իրադարձությունը, որ պատահական է տվյալ իրի համար, մեկ այլ իրի կողմից կարող է միանգամայն պատճառաբանված լինել և ընկալվել ճիշտ հակառակը՝ որպես անհրաժեշտություն: Օրինակ՝ ինչ-որ մեկը չգիտի, որ մարմինը հեղուկի մեջ ընկղմվելիս իր ծավալի չափով հեղուկ է արտանդում, և, ասենք, ջրով լի բաժակի մեջ մի քանի կտոր սառույց է գցում, արդյունքում ջուրը բաժակից թափվում է. ջրի թափվելը նրան պատահական կթվա, մինչդեռ մեկ այլ մարդ կարող է առավել տեղեկացված լինել և այս իրադարձությունը պատճառաբանել վերոհիշյալ օրենքով, ու այդ դեպքում ջրի թափվելը երկրորդ մարդու համար կընկալվի որպես անհրաժեշտություն: Մասնավոր ընկալման պատահականությունը անհատական գիտակցության վերլուծության արդյունքն է. արդյոք անհատական գիտակցության մեջ կան բավարար գիտելիքներ իրադարձությունը պատճառաբանելու համար, թե՞ ոչ:

Ընդհանուր ընկալման պատահականությունները, ի տարբերություն անհատական ընկալման պատահականությունների, ոչ թե անհատական, այլ կոլեկտիվ գիտակցության արդյունք են: Երբ իրերի տվյալ բազմության համար տվյալ իրադարձությունը մնում է անբացատրելի, ապա այդ բազմությունը այդ իրադարձությունը ընկալում է որպես պատահականություն. օրինակ՝ ինչ-որ տարածքում եղած հրաբուխը անսպասելի ու անբացատրելի է մնում այդ տարածքի բնակչության համար, որովհետև նախկինում երբեք այդպիսի իրադարձություն չի եղել, մինչդեռ մարդկանց մեկ այլ բազմություն՝ մասնագետները, դա չեն ընկալում որպես պատահականություն, որովհետև գիտեն, որ ժայթքած լեռը հազար տարի առաջ նույնպես ժայթքել է ու դրանից հետո համարվել քնած:

Եթե տվյալ իրադարձությունը պատահական է իրերի ամբողջ համակարգի համար, ապա դա համընդհանուր պատահականություն է. օրինակ՝ մինչև օրս ամբողջ մարդկության կողմից որպես պատահականություն է ընկալվում այն, որ ինը մոլորակներից հենց այս մոլորակն ունի կենդանի օրգանիզմների գոյության համար անհրաժեշտ պայմաններ:

Իհարկե, ցանկացած պատահականություն ցանկացած պահի կարող է բացատրվել և դադարել որպես այդպիսին ընկալվելուց: Երբ ի վերջո գտնվում է իրադարձության նախադրյալը, պատճառը, ապա այն դադարում է որպես պատահականություն ընկալվել: Ընդ որում մասնավոր ընկալման պատահականությունները կարող են լինել բազմազան ու բազմաթիվ, իսկ ընդհանուր և համընդհանուր ընկալման պատահականությունները անհամեմատ փոքր թիվ կարող են կազմել: Մասնավոր և ընդհանուր ընկալման ցանկացած պատահականություն ավելի մեծ հավանականություն ունի բացատրված, պատճառաբանված լինելու և, հետևաբար, ժխտվելու որպես պատահականություն, իսկ համընդհանուր ընկալման պատահականությունը բացատրվելու, պատճառաբանվելու առավել քիչ հավանականություն ունի: Որովհետև համընդհանուր ընկալման պատահականությունը ենթարկվում է համամարդկային գիտակցության վերլուծությանը, և այս դեպքում փաստորեն գործում են համամարդկային գիտելիքը, համամարդկա-

յին ճանաչողությունը:

Միևնույն ժամանակ այլևայլ իրադարձություններ, իրողություններ, որոնց պատճառաբանվածությունը դեռ անհայտ է, կարող են ստանալ պայմանական հիմնավորումներ ու չընկալվել որպես պատահականություն: Այդպես է հատուկ, կենսական կարևորության իրադարձությունների, իրողությունների դեպքում. հնագույն ժամանակներից սկսած մինչև օրս մարդկությունը իր համար կենսապես կարևոր, բայց ըստ էության՝ դեռևս անբացատրելի իրադարձությունների հետ կապված «ինչու»-ների պատասխանները միավորում է «Աստված» հասկացության ներքո՝ այդպիսով ժխտելով դրանց պատահականությունը և համարելով անհրաժեշտություն:

Իրադարձությունը կարող է ընկալվել որպես պատահականություն միայն մեկ անգամ՝ առաջին անգամը, և այն կարող է նույնիսկ վերածվել օրինաչափության³, եթե մի քանի անգամ կրկնվի: Այդ դեպքում տվյալ իրադարձության առաջին դրսևորումը արդեն կորակվի որպես անհրաժեշտություն. սա կարող է կոչվել «անհասկանալի կամ անհայտ օրինաչափություն»⁴:

Պատահականությունը և անհրաժեշտությունը անհամաչափ հերթագայության մեջ են իրերի համակարգի կեցության ընթացքում՝ կազմելով ներդաշնակ ընթացք: Հնարավոր է նույնիսկ պատահականության իսպառ բացակայություն, որի դեպքում արդեն ստացվում է անհրաժեշտությունների անընդհատ հերթագայություն: Միևնույն ժամանակ պատահականության ու անհրաժեշտության հերթագայությունը գործում է նաև իրերի համակարգում ներկա ենթահամակարգերի կամ ենթահամախմբերի հարաբերություններում և ենթահարաբերություններում: Ստացվում է, որ պատահականության ու անհրաժեշտության հերթագայությունը, որպես մեկ իրողություն, բնորոշ է իրերի համակարգին մեկ՝ որպես համընդհանրորեն, ապա՝ մասնավորապես: Այդ հերթագայությունը լայն առումով կազմում է կան անընդհատ պարուրածև հետագիծ, կան առաջացնում է շրջանաձև կան մեկ ուղղագիծ հոսք: Պարուրածև է հերթագայության այն հետագիծը, որի արդյունքում որևէ որակական տեղաշարժ է գրանցվում իրերի ամբողջ համակարգի կեցության մեջ: Շրջանաձև հոսքը ենթադրում է իրադարձությունների այնպիսի ընթացք, որտեղ հնարավոր են մասնավոր իրադարձությունների կրկնություններ. սա այնպիսի ընթացք է, որտեղ հերթագայությունը, սկսելով մեկ պատահականությունից, ի վերջո դարձյալ հանգում է միևնույն պատահականությանը: Իսկ ուղղագիծ հետագիծը ենթադրում է ընդամենը տեղաշարժ օբյեկտիվորեն գոյություն ունեցող ժամանակային հոսքի մեջ: Պարուրածև հոսքում պարտադիր տեղ ունի պատահականությունը՝ հատկապես համընդհանուր ու ընդհանուր ընկալումներով, իսկ ուղղագիծ հոսքը ընդամենը անհրաժեշտությունների հաջորդականությունն է: Շրջանաձև հոսքը այս երկուսից տարբերվում է նրանով, որ պատահականությունը այդ հոսքում երևան է գալիս երկու անգամ՝ որպես սկիզբ ու վերջ, բայց ըստ էության այն միայն մեկն է ամբողջ ընթացքի համար: Գուցե ենթադրվի, թե անհրաժեշտությունների անընդհատ հոսքը ոչ թե մի ան-

3 Տե՛ս **Чайковский Ю.**, նշվ. աշխ., էջ 171:

4 Նույն տեղում, էջ 172:


հրաժեշտությունից անցում է մյուսին, այլ մեկ հոծ գիծ, սակայն նկատի ունենանք, որ որքան էլ որակապես նույնը լինեն իրադարձությունները, այնուամենայնիվ դրանք տարբեր համակարգերի ու ենթահամակարգերի բաղադրիչներ են, որոնք պարզապես կազմում են մեկ ընդհանուր ընթացք: Ընդ որում գրեթե բացառված են և՛ պարուրած, և՛ շրջանաձև ընթացքների պատճենները ենթահամակարգերի համար. դրանցից յուրաքանչյուրը մեկն է, եզակի, քանի որ կազմվում է՝ ներառելով իրերի ամբողջ համակարգը՝ նրանում եղած բացառապես բոլոր ենթահամակարգերով ու ենթահամախմբերով հանդերձ:

Եթե ընդունենք, որ ակամա, օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրակա- նությունն ամենամեծ ամբողջական համակարգն է, ապա պարզ կլինի, որ մարդկության գլխավոր հատկանիշը՝ լեզուն, ամենամեծ ենթահամակար- գերից է, եթե ոչ ամենամեծը: Լեզուն մի կողմից պարուրած, մյուս կողմից՝ շրջանաձև հերթագայություններից է բաղկացած: Որպես մարդկության հա- մատարած հատկանիշ՝ այն հերթագայությունների շրջանաձև հետագիծ է. բոլոր մարդիկ օժտված են լեզվով, որպես պատահականություն կարելի է ընդունել որոշ մարդկանց՝ հողաբաշխ հնչյունային լեզվով օժտված չլինելը, իսկ որպես անհրաժեշտություն՝ այն, որ օրինաչափ է հողաբաշխ հնչյու- նային լեզվի գոյությունը: Այսինքն՝ հողաբաշխ հնչյունային լեզվից զուրկ լի- նելը պատահական է, քանի որ մարդկանց մեծամասնությունը տիրապետում է հողաբաշխ լեզվին: Մարդը ունի հողաբաշխ հնչյունային լեզու կամ չունի. սա անընդհատ, ուղղագիծ հերթագայություն է:


Ինչպես նշվեց, լեզուն, մյուս կողմից, պարուրած հերթագայություն է. լեզուն տարբերակներով դրսևորվող հատկանիշ է, որոնք ժամանակային հոսքին համընթաց, որակական փոփոխություններ են կրում՝ այդպիսով որակապես փոփոխելով նաև իրերի ամբողջ համակարգը: Որպես պարզա- գույն օրինակ կարելի է ներկայացնել այն, որ լեզուների ազգային առումով տարբերակվածությունը մարդկության համար փոխըմբռնման խոչընդոտ է, հետևաբար նաև փորձի ազատ փոխանակմանն է խոչընդոտում: Այս խոչընդոտը լեզուն հաղթահարում է, օրինակ՝ փոխառությունների շնորհիվ, և որևէ նոր ձեռքբերում փոխանցվում է մյուսներին մայր լեզվից ստացած անվանումով, այդպիսով որոշ չափով փոփոխություն մտցնելով փոխառու լեզվում և այդ ձեռքբերումը հասանելի դարձնելով փոխառու ժողովրդին: Փոխառու ժողովրդի համար տվյալ փոխառությունը պատահականություն է, քանի որ իր կեցության մեջ ակնկալվող, անհրաժեշտ իրողություն չէ, և քանի որ դրա շնորհիվ կեցության ու գիտակցության փոփոխություն է տե- ղի ունենում, ուրեմն առաջացնում է հերթագայությունների պարուրածն հետագիծ:

Լեզուն փաստորեն գոյություն ունի որպես մարդկության ընդհանրական հատկանիշ և հիմնարար ենթահամակարգ ու միևնույն ժամանակ՝ այն բաղկացած է ավելի փոքր, մասնավոր համակարգերից, ենթահամակար- գերից: Մարդկությունն ունի լեզու, մարդկությունը տարանջատված է մեծ ու փոքր խմբավորումների, որոնցից յուրաքանչյուրն ունի լեզվական իր համակարգը, այդ համակարգն իր հերթին բաղկացած է առավել փոքր հա- մակարգերից, քանի որ յուրաքանչյուր մարդկային խմբավորում շերտա-

վորված է, և այդ շերտերից յուրաքանչյուրն ունի լեզվական յուրահատուկ համակարգ: Այդ շերտերն իրենց հերթին բաղկացած են հարաբերականորեն անտարրալուծելի մասերից՝ անհատներից, որոնք իրենց հերթին ունեն լեզվական անհատական համակարգ: Եթե դա փորձենք տեսանելի դարձնել, կստացվի.



Անհատը կոչվեց «հարաբերականորեն անտարրալուծելի», որովհետև իրականում միևնույն անհատը լեզվական առումով բաղկացած է մեկից ավելի մասերից. միևնույն անհատը տիրապետում և գործածում է մեկից ավելի լեզվական շերտեր՝ կախված տվյալ պահին իրեն շրջապատող միջավայրից: Այս հանգամանքը թույլ է տալիս վերը տրված գծագրին ավելացնել ևս մեկ օղակ՝ ի վերջո ստանալով հետևյալ պատկերը.



Նախ՝ արժե հասկանալ՝ ինչու է մարդկության հիմնարար հարաբերության հիմնարար հատկանիշը, մարդկության հաղորդակցման գլխավոր միջոցը դարձել հենց հողաբաշխ հնչյունային լեզուն: Բանն այն է, որ հնչյունը համապարփակ է. հնչյունի միջոցով հնարավոր է արտահայտել ցանկացած իրողություն: Հնչյունը եզակի ձկունության ալիք է, որ ընդունակ է արտահայտել ոչնչից մինչև ամեն ինչ: Փաստորեն պատահական չէ, որ իրականության վերարտադրումը և փոխադարձ հարաբերությունների զարգացումը կատարվում է հնչյունի միջոցով:

Ինչ վերաբերում է երկրորդ օղակին, պատահականությունն ու անիրաժեշտությունը կազմում են անընդհատ պարտադիր հերթագայություն, և

Եթե բացառում ենք պատահականության օբյեկտիվ գոյությունը, ապա կանգնում ենք պարադոքսի առաջ. չկա մաքուր պատահականություն: Իսկ ինչպե՞ս է հնարավոր բացատրել նշված կառուցվածքի երկրորդ օղակի միասնությունը՝ տվյալ ազգի՝ հենց տվյալ լեզվով օժտված լինելու փաստը: Այստեղ իրականում ոչ թե մաքուր պատահականություն է, այլ կրկին պատահականության, այսպես ասած, պատրանք: Անվիճելի է, որ լեզուն՝ որպես հնչյունային ամբողջ, ֆիզիկական առումով նախևառաջ լսողական ընկալման իրողություն է, իսկ լսողական և տեսողական ընկալումներն ի վերջո միավորվում են ստայնացած տպավորության շտրիիվ: Սա նշանակում է, որ եթե մարդկանց տվյալ խումբը որևէ իր անվանում է միևնույն բառով, ուրեմն իրականության տվյալ հատվածի ընկալումը համընկնում է այդ խմբի անդամների մտային դաշտերում: Այսինքն՝ ի սկզբանե տվյալ լեզվի ներքո միավորվել են միևնույն աշխարհընկալման ու վերլուծողական միևնույն ճաշակի մարդիկ: Ուրեմն պարզ է, որ պատահականությունն այս դեպքում նույնպես թվացյալ է: Մյուս կողմից՝ եթե մեկը տվյալ ազգի ներկայացուցիչ է, ապա պատահականություն չէ նրա լեզվական պատկանելությունը. եթե մեկը ազգությամբ հայ է, միանգամայն սպասելի է, որ նա պետք է հայերեն խոսի:

Պատահականության և անհրաժեշտության հերթագայությունը, թվում է՝ օրինաչափ է նշված բոլոր օղակների համար, սակայն, որքան էլ զարմանալի է, առաջինին հաջորդող մյուս օղակներում պատահականությունը հերթագայությունից դուրս է ընկնում՝ այդպիսով փաստորեն տեղի տալով կանոնավոր ու միապաղաղ ընթացքին: Ստացվում է, որ լեզվի ու մարդկության կապը ոչ թե մաքուր պատահականություն է, այլ ըստ էության համընդհանուր ընկալման պատահականություն: Ազգի ու ազգային լեզվի միջև կապը, ինչպես տեսանք, միանգամայն պատճառաբանված է, հասարակության բաղկացուցիչ սոցիալական խմբերի ու նրանց բնորոշ լեզվական շերտերի հարցում նույնպես պատահականությունը բացառվում է, փոխարենը տրամաբանական պատճառաբանություն կա: Հասկանալի է, որ գիտելիքի ու ճանաչողության սահմանները դեր են խաղում նաև լեզվի մեջ: Այսինքն՝ լեզուն՝ որպես արդեն գոյություն ունեցող համակարգ, ճանաչողության առարկա է այնպես, ինչպես իրականության ցանկացած այլ համակարգ, և յուրաքանչյուրը լեզուն օգտագործում է այն չափով, որքանով ինքը հասցրել է ճանաչել ու ամբարել որպես գիտելիք: Ուրեմն հասարակությունը կազմող շերտերը չեն կարող հավասարաչափ տիրապետել ու օգտագործել լեզուն. երեխան նոր է սկսում գիտելիք ամբարել իրականության վերաբերյալ և լեզուն նույնպես դեռ ճանաչման գործընթաց է ապրում նրա գիտակցության մեջ: Ու պատահական չէ, որ երեխայի և կենսապես փորձառու անհատի լեզվական հնարավորություններն ու սահմանները չեն համընկնում: Այսինքն՝ պատահական չէ, որ երեխան խոսում է սահմանափակ լեզվական արտահայտչամիջոցներով, իսկ փորձառու անհատը՝ ավելի հարուստ լեզվով: Սա զուտ անհրաժեշտությունների անընդհատ հաջորդականություն է, որը, ինչպես ասվել է, ուղղագիծ հոսք է և չի ապահովում զարգացում: Փորձենք պատկերացնել, որ լեզուն ու մարդը կանոնավոր անցումներ են ապրում, ասենք՝ փոքրից մեծանում. մեկ տարեկանում

բոլոր մարդիկ գիտեն երկու բառ, արտասանում են նույն ձևով, հիսուն տարեկանում բոլոր մարդիկ գիտեն հարյուր բառ, արտասանում են նույն առոգանությամբ ու բոլոր բառերը գործածում են միշտ կայուն իմաստներով: Այսպիսի ընթացքը չի կարող զարգացում խոստանալ ո՛չ լեզվին, ո՛չ անհատին:

Լեզուն ու մարդկությունը զարգանում են միասին՝ միասին անցնելով միևնույն ճանապարհը:

Լեզվի զարգացման հիմքը նրա անհատական կիրառության տարբերակներն են՝ անհատական լեզուն, իսկ մարդկության զարգացման հիմքը մարդկային առանձնյակներն են՝ անհատները, որոնցից յուրաքանչյուրն անկրկնելի է: Անհատն ու անհատական լեզուն կազմում են անկրկնելի միասնություն. այնքան, որքան անկրկնելի է անհատն ինքնին, նույնքան անկրկնելի է նրա լեզուն, և նրանց միասնությունն արդեն եզակիության է հավակնում: Անհատական լեզուն ընդունակ է փոփոխվելու մեծ արագությամբ՝ անկախ որակից, և ընդունակ է տանելու իր հետևից ընդհանրապես լեզուն, որի որակը արդեն կախված է անհատական լեզուների գերակշռող որակներից. որքան շատ են անհատական լեզուների բարձրորակ դրսևորումները, այնքան զարգացած ու որակյալ է ընդհանրապես լեզուն: Եթե անհատական լեզուն զարգացման հիմք է, նշանակում է՝ նրանում գործում է հերթագայության պարուրածն ընթացք. պատահականություններն ու անհրաժեշտությունները կազմում են անպայման հաջորդականություն:

Անհատական լեզուն ինքն իր ընթացքի մեջ բաղկացած է մեծ մասամբ պատահականություններից՝ սկսած բառընտրությունից մինչև նույնիսկ ասելիքի հրապարակում:

Անհատական լեզուն պատկերացնենք որպես պարուրածն հոսք և այդ հոսքի մեջ առանձնացնենք անհրաժեշտությունն ու պատահականությունները: Ընդ որում անհրաժեշտությունն ու պատահականությունը անհատական առումով նույնպես կարող են լինել ընդհանուր և մասնավոր: Ընդհանուրն այն է, երբ այդ հերթագայությունը գործում է տվյալ անհատի ամբողջական լեզվական գիտելիքի մասշտաբով, իսկ մասնավորն այն է, երբ այդ հերթագայությունը գործում է միայն գիտելիքի մի մասի մեջ:

Նախ՝ մարդու լեզվական գիտելիքը կարող է ընդհանրապես գործի դրվել կամ ընդհանրապես չգործածվել. միշտ կարող է լինել իրադրություն, որի ժամանակ մարդը ոչինչ չսսի կամ չգրի: Այն դեպքում, երբ տրամաբանական ու սպասելի է լեզվի կիրառումը մարդու կողմից, նշանակում է լեզուն հանդես եկավ որպես անհրաժեշտություն, իսկ երբ լեզվի կիրառումը անսպասելի է, անկանխատեսելի, բայց տեղի է ունենում, նշանակում է՝ լեզուն հանդես եկավ որպես պատահականություն: Մյուս կողմից՝ մարդու որոշակի լեզվական գիտելիքը չի կարող օգտագործվել միանգամից ու ամբողջությամբ. լեզվական գիտելիքը միշտ հանդես է գալիս մաս առ մաս: Յուրաքանչյուր իրադրություն, միջավայր պարտադրում են միևնույն անհատի ունեցած լեզվական գիտելիքի համապատասխան հատվածի դրսևորում կամ օգտագործում: Ստացվում է, որ լեզուն՝ որպես գիտելիք, անհրաժեշտ գոյություն է անհատական գիտակցության մեջ, նույնքան անհրաժեշտ է լեզվական ընդհանուր, ամբողջական գիտելիքի միայն որոշակի մասի

օգտագործումը ըստ իրադրության: Այսինքն, երբ տվյալ անհատը տվյալ միջավայրում գործածում է լեզվի տվյալ դրսևորումը և ոչ թե մեկ ուրիշը, չի կարելի պատահականություն համարել այդ, որովհետև միջավայրը լեզվին ստիպում է հարմարվել իրեն: Օրինակ՝ երբ ինչ-որ մեկը տիրապետում է մի քանի օտար լեզվի և հայտնվում է օտարալեզու միջավայրում, որտեղ իր մայրենին պարզապես անհասկանալի է, ստիպված է օգտագործել համապատասխան օտար լեզուն, որով իր ասածը հասկանալի կլինի:

Պատահականության ու անհրաժեշտության հերթագայության մասնավոր դրսևորումը նկատելի է իրադրությունների շղթայում մի բաղկացուցիչ դրության պարագայում լեզվական ամբողջ գիտելիքից մի որևէ մասի օգտագործման ժամանակ: Կարելի է ասել, որ այդ հերթագայության մասնավոր դրսևորումը ըստ էության դիպվածների միությունն է՝ սուբյեկտիվ լեզվական և օբյեկտիվ իրականության:

Լեզուն ինքնին տարրերի տարբերակայնություն ունեցող ամբողջ է. յուրաքանչյուր անհատ կարող է տիրապետել այդ տարրերի տարբերակներին և հակառակը՝ կարող է տիրապետել եղած բազմաթիվ տարբերակներից ընդամենը մեկին: Որքան շատ տարբերակների է տիրապետում անհատը, այնքան մեծ է հավանականությունը, որ իրադրության մեջ մարդը կարող է գործածել այդ տարբերակներից որևէ մեկը «պատահականության սկզբունքով»: Իրականում այդ ընտրության պատճառաբանվածության համար պատասխանատու է ենթագիտակցությունը. մարդն ընտրում է լեզվական իր ունեցած տարբերակներից հենց այն մեկը, որը ենթագիտակցաբար հարմարեցնում է տվյալ իրադրությանը: Իսկ եթե մարդու լեզվական գիտելիքի սահմանները սեղմ են, ապա պատահականության մասին մտածելն ավելորդ է, որովհետև մարդը գործածում է լեզվական այն տարբերակը, որն ունի որպես գիտելիք, և ընտրության հնարավորություն չի մնում. իրադրության մեջ անհրաժեշտորեն գործածվում է որպես գիտելիք եղած տարբերակը:

Որևէ իրադրության մեջ մարդու խոսքը ձևավորվում է իր ունեցած լեզվական գիտելիքի շրջանակում, և որքան լայն է այդ շրջանակը, այնքան պատահականությունների հաճախականության աճման հավանականություն կա: Սա նույնպես ինչ-որ չափով պարադոքսալ պնդում կարող է թվալ, որովհետև լեզուն գիտակցության կազմակերպման ու կարգավորման միջոց է, և պետք է, որ լեզվական գիտելիքի չափը գիտակցության վերահսկողությունը մեծացնեն ասելիքի կազմակերպման վրա նույնպես: Սակայն հիշենք, որ լեզվում գրեթե բացառված է ձևերի միօրինակությունը, իսկ ձևերի բազմազանությունը միշտ ընտրություն է ենթադրում: Այսինքն՝ անհատը, որ լեզվական լայն գիտելիք ունի, արտահայտվելու համար միշտ էլ լեզվական արտահայտչամիջոցների բազմազանության մեջ կողմնորոշվելու և մեկն ընտրելու պարտադրանք ունի: Այսպես է ոչ միայն բանավոր զրույցի դեպքում, որ մեկից ավելի կողմեր է ընդգրկում, այլ նույնիսկ այն դեպքում, երբ մարդը մտածելու ավելի շատ ժամանակ ունի՝ գրավոր խոսք կազմելիս: Մարդը միշտ ընտրում է իր իմացած լեզվական արտահայտչամիջոցներից միայն մեկը՝ այդ պահին ինչ-որ միտք փոխանցելու համար: Ընդ որում բանավոր խոսքի ժամանակ պատահականությունը կարող է նույնիսկ գերազանցել անհրաժեշտությանը՝ անհրաժեշտության դիրքերը

հետ մղելով ընդամենն այնտեղ, որտեղից սկսում է մարդու և լեզվի միասնության խնդիրը. անհրաժեշտությունն այդ հոսքի մեջ կմնա ընդամենն այնքանով, որքանով մարդը անհիշելի ժամանակներից հաղորդակցվում է լեզվի միջոցով: Օրինակ՝ ինչ-որ մեկը բուն հուզմունքի պահին ինչ-որ մեկին միտք է փոխանցում, այդ միտքը կարող է կազմված լինել նույնիսկ իրար հետ կապ չունեցող, կցկտուր լեզվական արտահայտչամիջոցներից: Սա չի նշանակում, թե տվյալ մարդը վատ է տիրապետում լեզվին, սա նշանակում է, որ գիտակցությունը միտքը կազմակերպել է պատահական ընտրության սկզբունքով կամ նույնիսկ իր տեղը գիջել է ենթագիտակցությանը կամ անգիտակից շերտին: Այս դեպքում փաստորեն տեղի ունի երկակի պատահականություն՝ մի կողմից գիտակցության պատահական ընտրությունը, մյուս կողմից՝ այն, որ անհատը իր լեզվական գիտելիքի ոչ օրինաչափ արտահայտությունն է մատուցում: Սակայն հնարավոր է նաև ավելի մեղմ դրսևորում, երբ անհատը պարզապես գիտակցաբար ընտրում է իր ամբարած ձևերից առավել հարմարը, նախընտրելին: Ու թվում է՝ այստեղ ընդհանրապես պատահականություն չկա, որովհետև խոսքը գիտակից, նպատակադրված ընտրությանն է վերաբերում: Սակայն եթե փորձենք ընտրությունից հետո «Ինչու՞ հենց այս և ոչ թե մյուս ձևը» հարցին պատասխանել, ամենայն հավանականությամբ պատասխանը կլինի «Մաքուր պատահականություն»: Իրականում այստեղ նույնպես պատահականությունը օբյեկտիվ դրսևորում չունի և դարձյալ սուբյեկտիվ ընկալման արդյունք է: Բանն այն է, որ միտքը լեզվական արտահայտչամիջոցներով արտահայտելու համար գիտակցությունն օգտագործում է տվյալ պահին «ակտիվ» ձևերը: Այսինքն՝ անհատը կարող է իմանալ միևնույն բառի անվանման բոլոր հոմանշային տարբերակները, սակայն հաճախ գործածել միայն մեկը: Այդ դեպքում մյուս տարբերակները կմնան ոչ թե գիտակցության ակտիվ շերտում, այլ կանցնեն ենթագիտակցական շերտ:

Գիտակցությունը մեկուսի ու կտրված չէ ենթագիտակցությունից, այլ ժամանակ առ ժամանակ, այսպես ասած, թարմանում է՝ պրպտելով ենթագիտակցությունը: Եվ գիտակցության այս հատկությունը թույլ է տալիս բացատրել վերը նկարագրվածի հակառակ երևույթը նույնպես. հնարավոր է, որ անընդհատ գործածվող, ակտիվ լեզվական ձևը հանկարծ տեղի տա առավել քիչ գործածվող ինչ-որ ձևի: Սա կարելի է համարել դիպվածների միացում, երբ գիտակցության որոնման պահը համընկնում է լեզվական այդ ձևի գործածության անհրաժեշտ պահի հետ: Որքան էլ մարդը լավատեղյակ լինի լեզվական արտահայտչամիջոցների բազմազանությանը՝ գռեհիկից մինչև վեհ շերտեր, այնուամենայնիվ մեծ մասամբ միտքը փոխանցում է չեզոք ձևերի միջոցով, սակայն հանդիպում են այնպիսի իրադրություններ, երբ օտարված թեկուզ շքեղ լեզվական ձևը անպատեհ ու ծիծաղահարույց է թվում և բացատրվում, թե պատահական ստացվեց: Մինչդեռ, ինչպես վերը ասվել է, դրանց ընտրության հիմնավորումը պետք է փնտրել ենթագիտակցության մեջ: Իհարկե, առայժմ գրեթե գրոյական արդյունք կարելի է ստանալ այդ հիմնավորումը փնտրելու գործում, որովհետև ենթագիտակցության աշխատանքը պարզ տեսնել և ճշգրիտ բացատրել դեռևս հնարավոր չէ:

Եթե ենթագիտակցությունը պահպանում է գիտակցության ամբարած

լեզվանյութը, իսկ գիտակցությունն այն օգտագործում է որպես մտային ուրվագծումների հստակ ձևայնացումներ, ապա կարելի է ասել, որ գիտակցությունը ապահովում է լեզվի ու մտքի անհրաժեշտ միասնությունն ու միասնական ընթացքը, իսկ ենթագիտակցությունը հիմք է դառնում պատահականության համար: Այստեղ բացառիկ դեր է ստանում անգիտակցականը, որի շնորհիվ կամ որի պատճառով պատահականությունն ու անհրաժեշտությունը տարանջատված են ընկալվում: մարդը ենթագիտակցության մեջ ունի լեզվական ձևերի համախումբ, մարդը գիտակցում է, որ խոսում է կամ գրում, բայց չի գիտակցում, թե ինչպես է լեզվական մի քանի ձևերից ընտրում մեկը և ոչ թե մյուսը ու ընտրությունը համարում պատահականության արդյունք: Այն, որ ենթագիտակցությունը որպես գիտելիք պահպանում է ճանաչված ամբողջ նյութը՝ ներառյալ լեզուն, դեռ չի նշանակում, որ այն «մարդկային ներաշխարհի հոգեբանության ամենալայն ոլորտն է»⁵, որովհետև անգիտակցական ոլորտը ընդգրկում է և՛ գիտակցականը, և՛ ենթագիտակցականը միաժամանակ: Եվ ցանկացած իրադրություն, որը որպես պատահականություն ստեղծվում է մարդու կողմից, ամենայն հավանականությամբ անգիտակցական ոլորտի գործողությունն է, որ տվյալ պահին գերիշխանություն է ստացել հոգեկան առումով:

Եթե լեզվում գործեր միայն անհրաժեշտությունների ուղղագիծ հոսքը, ապա մարդկային իրականում անսահման ներաշխարհը սահմանափակված կլիներ ընդամենը հատուկ կաղապարների մեջ, մարդկության ընթացքը կլիներ միապաղաղ, առանց ելևէջումների, որովհետև լեզվի արտահայտչական ամբողջը անընդհատ սնվում է մարդկային մտքի բովանդակային անչափելի ամբողջից: Լեզուն ու միտքը ընթանում են նույն արագությամբ, նույնալիսի վայրիվերումներով՝ որպես ընթացքի տարածություն ունենալով ականա տրված իրականության անհրաժեշտությունների անընդհատ, ուղղագիծ հոսքը՝ ժամանակը: Միտք-լեզու հյուսվածքը համընդհանուր առումով ամրանում է ի սկզբանե որպես պատահականություն որակված իրողություններից, իսկ մասնավոր առումով այդ հյուսվածքը իր ամրությամբ պարտական է անհատական-որոնող, անընդհատ ճանաչող գիտակցությանը: Գիտակցությունն այս առումով ոչ թե զուտ «իմաստային ամբողջություն»⁶ է, որ ընդամենը «կապված է ֆիզիկապես տրված տարածության հետ»⁷, այլ ֆիզիկական տարածությանը համահավասար բովանդակային տարածություն: Թերևս այս է պատճառը, որ Էյնշտեյնի երազած մեկ ընդհանուր ֆիզիկական տարածությունը⁸ դժվար թե երբևէ ստացվի, որովհետև տարածությունն արդեն իսկ մեկ ամբողջ է՝ ձևային ու բովանդակային տարածությունների միասնություն:

Եթե նույնիսկ գոյություն ունենար մաքուր պատահականությունը՝ որպես օբյեկտիվ իրողություն, ապա լեզուն դուրս կթողներ այն իր համակարգից. ինչպես հասարակությունն ինքը իր մեջ օրգանական ամբողջի հասնող համակարգ է, այնպես էլ համընդհանուր առումով լեզուն մեկ ան-

5 Хольнов С. Тоннель в подсознание. М., 2011, с. 4:
6 Налимов В. Спонтанность сознания. М., 1989, с. 225:
7 Նույն տեղում:
8 Տե՛ս նույն տեղում, էջ 226:

տարրալուծելի ամբողջ է, որի մի տարրը անհնար է փոխարինել ցանկացած ուրիշով: Լեզվի բնականությունը թույլ է տալիս ինքնամաքրվել՝ համակարգից դուրս թողնելով անպիտանը և ներառելով պիտանին: Իսկ ըստ էության լեզուն միայն համալրվում է, այսինքն չունի անպիտան տարրեր, որովհետև եթե լեզվական որևէ իրողություն երբևէ դուրս է մնում գործածությունից, դեռ չի նշանակում, որ այն այլևս գոյություն չունի. ինչ-որ լեզվի հնացած, անգործածական բառերը թեև ակտիվ բառաշերտից դուրս են, այնուամենայնիվ գոյություն ունեն ընդհանրապես լեզվի բառային կազմում, և եթե տվյալ լեզվական ձևի մասին խոսվում է, նշանակում է՝ այն դեռ գոյություն ունի:

Եվ ի վերջո, լեզվական ոչ մի ձև չի կարող դուրս մնալ լեզու համակարգից, որովհետև ինչ-որ անհատական գիտակցություն ինչ-որ պահի կարող է պատահականորեն ենթագիտակցության մեջ հենց այդ ձևը որոնել:

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան – տարբեր գիտական պարբերականներում տպագրել է 8 գիտական հոդվածներ տեքստի լեզվաբանության, լեզվանշանագիտության և լեզվափոխակերպության վերաբերյալ: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ընդհանուր լեզվաբանության, լեզվափոխակերպության, նշանագիտության, հոգելեզվաբանության ոլորտները:

Summary

THE SEQUENCE OF NECESSITY AND CONTINGENCY IN LANGUAGE

Siranush G. Hovhannisyan

Keywords – Contingency, necessity, stream of events, consciousness, subconsciousness, unconscious sphere, language, language variant, language mean of expression.

The article focuses on two fundamental concepts of philosophy –contingency and necessity. First, these two concepts are presented as events acting consecutively in an entire stream of events. There are two streams of events – the ones, composed of necessities only and others, comprising contingencies. Then, the role of this pair of notions is presented also in terms of linguistics. It is emphasized that contingency doesn't exist objectively; it's merely the perception of unpredictable necessity as a contingency. From this point of view we differentiate between three types of contingency– that of overall perception, that of general perception and that of private perception. The same can be said about language which although is developing due to contingencies , but is a system of necessities as an entity.

ЧЕРЕДОВАНИЕ СЛУЧАЙНОСТИ И НЕОБХОДИМОСТИ В ЯЗЫКЕ

Сирануш Г. Оганесян

Ключевые слова – Случайность, необходимость, поток событий, сознание, подсознание, бессознательная сфера, язык, языковой вариант, языковое средство выражения.

В статье рассматриваются два из важнейших понятий философии – случайность и необходимость. Эти два понятия, во первых, представляются как чередование, проявляющееся в качестве потока событий. Поток может быть двух типов – состоящий исключительно из необходимостей и включающий случайности. Затем данная пара понятий представляется в языковом поле. Подчеркивается, что в действительности не существует случайности: случайность – это непредсказуемая необходимость, которая в связи с восприятием оценивается как нечто случайное. Исходя из этого, отличаются три типа случайности– всеобщего восприятия, общего восприятия и частного восприятия. Вышеуказанное чередование действует также в языке, но язык, несмотря на это, не терпит случайностей, а представляет из себя систему необходимостей.